Որոշ հրաբուխներ ծնվում են բառացիորեն մարդկանց աչքի առաջ: Այդպես առաջացավ, օրինակ, Պարիկուտեն հրաբուխը Մեքսիկայում: 1943 թվականի փետրվարի 20-ին եգիպտացորենի դաշտում գյուղացիները տեսան ծխի թանձր քուլաներ, որոնք բարձրանում էին 7 սմ տրամագծով անցքից: Օրվա վերջին սկսվեցին պայթյունները, որոնք գրեթե առանց ընդհատումների շարունակվեցին մի քանի ամիս: Միայն առաջին 3 օրվա ընթացքում հրաբխային մոխրից և բեկորներից առաջացավ 160 մ բարձրության կոնաձև սար, որը 1 տարի անց հասավ 430 մ-ի: Պարիկուտենը վերջնականապես հանգավ 1952 թվականին, երբ նրա բարձրությունը հասավ 2800 մ-ի:



Աշակերտներ՝

Ակունց Մարի
Մինասյան Սուրեն
Նարինյան Անի
Շիրինյան Լիլիթ
Ալեքսանյան Մենուա
Պետրոսյան Միքայել
Խաչյան Ալեքս
Ղազարյան Լևոն

ՀՐԱԲՈՒԽ

Գործողություն.

1. Կառուցիր փոքր հրաբուխ:
2. Մեջը լցրու 2 ճ/գ սոդա:
3. Ավելացրու օճառ և ներկ:
4. Վրան լցրու քացախ:
5. Վայելիր «ժայթքումը»:

Նախագծի ղեկավար՝
Հերմինե Ալավերդյան

Ի՞նչ է հրաբուխը

Հրաբուխները ժայթքում են Երկրի ընդերքից, երբ ապարներն այնտեղ խիստ տաքանում են և փոխակերպվում գազերով հագեցած մեծ ճնշման հրահեղուկ զանգվածի՝ մագմայի:

Եթե հրաբխալեռը նախքան ժայթքելը պատված է լինում ձյունով ու սառույցով, ապա շիկացած լավան հալեցնում է դրանք և ջուրը խառնվելով մոխրին, առաջացնում է հզոր ցեխահոսքեր, որոնք մեծ արագությամբ տարածվում են լանջն ի վար: Կոլումբիայում 1985 թ. ժայթքման հետևանքով ցեխահոսքը հաշված րոպեներում ոչնչացրել է մի քանի բնակավայրեր, զոհվել է ավելի քան 25 հազար մարդ:

79 թ. Վեզուվ հրաբխի ժայթքման հետևանքով կործանվել են հին հռոմեական երեք քաղաքներ՝ Պոմպեյը, Հերկուլյանումը և Ստաբիանը, ինչպես նաև բազմաթիվ գյուղեր: 1883 թ. Ինդոնեզիայում Կրակատաու հրաբխի ժայթքման հետևանքով կղզին հանկարծ պայթել է, նրա մեծ մասը վերածվել է քարաբեկորների ու փոշու: Գազափոշու ամպերը հասել են 80 մ բարձրության: Հրաբխի հետևանքով զոհվել է 36 հազար մարդ:

ԳՈՐԾՈՂ ՀՐԱԲՈՒԽՆԵՐ

Մշտական կամ պարբերական ակտիվության հրաբուխները կոչվում են գործող հրաբուխներ: Այժմ երկրի վրա կա ավելի քան 1300 գործող հրաբուխ: Դրանց թվին են պատկանում երկրագնդի խոշորագույն և հատկապես ահարկու Ավաչինսկայա և Կլյուչևսկայա սոպկանները՝ Կամչատկայում, Էտնան ու Վեզուվը՝ Իտալիայում, Հեկլան և Էյաֆյաթլայոքուլը՝ Իսլանդիայում, Ֆուձիյաման՝ Ճապոնիայում, Մերապին և Կրակատաուն՝ Ինդոնեզիայում, Պոպոկատեպետլ և Օրիսաբան՝ Մեքսիկայում, Կիլաուեան ու Մաունա Լոան՝ Հավայան կղզիներում և այլն:

Հրաբխի ժայթքումը տեղի է ունենում, երբ երկրաբանական ճնշումը բարձրանում է և մագման դուրս է մղվում:

ԱՇԽԱՐՀԻ 5 ԱՄԵՆԱԲԱՐՁՐ ՀՐԱԲՈՒԽՆԵՐԸ